# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<22>> ----------ապրիլ----------2025թ. N ՄՈ/ 473 -Ա

ք. Արմավիր

**«ԱՐՄԱՎԻՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՌՈՒԶԱՆՆԱ ԱՍՄԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Ռուզաննա Ասմարյանի 2025 թվականի ապրիլի 21-ի դիմումը.

**որոշում եմ՝**

1. «Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Ասմարյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը 2025 թվականի ապրիլի 22-ից 30-ը ներառյալ՝ 6 աշխատանքային և 1 հիշատակի օր տևողությամբ:
2. Ռուզաննա Ասմարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Կարինե Բարսեղյանին:
3. «Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Կարինե Բարսեղյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի ապրիլի 22-ից 30-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Ռուզաննա Ասմարյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի մայիսի 2-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ